



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

18 փետրվարի 2019թ. թիվ 212

**Վ. ՂԱՐՍԱՅԱՆԻՆ ԵՎ Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ  
ՍՊԻՏԱԿԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ ԵՎ ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔ  
ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ և 10-րդ կետերով, հիմք ընդունելով քաղաքաշինության վարչության պետի զեկուցագիրը՝  
**Հ ր ա մ ա յ ու մ եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Վահրամ Ղարսայանին, նույն վարչության առաջատար մասնագետ Արման Մխիթարյանին ա/թ փետրվարի 19-ին մեկ օրով գործուղել Սպիտակի տարածաշրջան և Դսեղ համայնք՝ Գուգարքի, Սպիտակի, Թումանյանի Մ3, Մ6 միջպետական նշանակության ճանապարհների, Հ22 հանրապետական նշանակության ճանապարհների սպասարկման և համայնքների վարչական տարածքներում վերոնշյալ ճանապարհներին հարակից հատվածներում ապօրինի աղբաթափման մաքրման աշխատանքների դիտարկման համար:

2. Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը:

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ  
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

 Invalid signature

**X** 

**ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

**Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2019թ. փետրվարի 18  
ք.Վանաձոր